

**«ԵՐԵՎԱՆԻ ԶԵՐՄԱԷԼԵԿՏՐՈԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՕԴՈՐԱԿԻՉՆԵՐԻ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ և ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

N ԵՋԷԿ-ԳՀՇՁԲ-21/49

ք. Երևան

«15» 09 2021թ.

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ա. Գրիգորյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ԱԶ «Վահե Խաչատրյան Հայկի»>, ի դեմս տնօրեն Վ.Խաչատրյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար օդորակիչների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **առավելագույնը 8897000 (ութե միլիոն ութ հարյուր ինսուսնյոթ հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $V = U \cdot K \cdot D \cdot P$, որտեղ՝

V-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է:

U-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է, որը հավասար է 3651724 ՀՀ դրամ

K-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է, որը հավասար է 11876200 ՀՀ դրամ:

D-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է:

P-ն մատուցված ծառայության քանակն է:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:²¹ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ
ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3
Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 2473600002170010
ՀՎՀՀ 02205026

գլխավոր տնօրեն _____ Ա. Գրիգորյան
(ստորագրություն)



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

ԱՁ Վահե Խաչատրյան Հայկի
ք. Երևան, Նոր Նորք Նանսեն 18/1 ք9
Բանկ «Ինելիթանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050832124101001
ՀՎՀՀ 80588284

տնօրեն _____
Վ. Խաչատրյան
(ստորագրություն)



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ՓԱՄԱՆԱԿԱՏՈՒՅՑ*

Իրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Տեխնիկական բնութագիրը	Հափման միավորը	ընդհանուր առավելագույն գինը/ՀՀ դրամ	ընդհանուր բանակը	մատուցման	
					հասցեն	ժամկետը
1	«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար օրորակիչների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման ծառայություն Տեխնիկական բնութագիրը ներկայացված է հավելված 2.1-ում	դրամ	8 897 000	1	Բ. Երևան, Արցախի 4-րդ նրբ. թիվ 14	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտա-կանություն-ների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացույցային օր անց մեկ տարվա ընթացքում

ՀՀ դրամ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ
 Բ. Երևան, Արին Բերի 3-րդ նրբանցք, թիվ 3
 Մոլդիբաճյանի ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ
 Հ/Հ՝ 2473600002170010
 ՀՎՀՀ՝ 02205028



Գլխավոր տնօրեն _____ Ա. Գրիգորյան
 (ստորագրություն/)

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

ԱՋ Վահե Խաչատրյան Հայկի
 Բ. Երևան, Նոր Նորք Նանսեն 18/1 բ/9
 Բանկ «Ինտերբանկ» ՓԲԸ
 Հ/Հ՝ 2050832124101001
 ՀՎՀՀ՝ 80588284



տնօրեն _____ Վ. Խաչատրյան
 (ստորագրություն)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին, այդ թվում	Ընդամենը
1	50531200	«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար օդորակիչների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման ծառայություն Տեխնիկական բնութագիրը ներկայացված է հավելված 2.1-ում	Հանձնման-ընդունման արձանագրության երկկողմ հաստատման օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում	100 %

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Կ Ա Տ Ա Ր ՈՂ

Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ
 ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3
 Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ
 Հ/Հ 2473600002170010
 ՀՎՀՀ 02205028

ԱՁ Վահե Խաչատրյան Հայկի
 ք. Երևան, Նոր Նորք Նանսեն 18/1 ք9
 Բանկ «Ինտերբանկ» ՓԲԸ
 Հ/Հ 2050832124101001
 ՀՎՀՀ 80586284

գլխավոր տնօրեն _____ Ա. Գրիգորյան
 (ստորագրություն/)

տնօրեն _____ Վ. Խաչատրյան
 (ստորագրություն)



			Հավելված 2.1
«Երևանի ՁԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար			
օդորակիչների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման ծառայության ձեռքբերման			
Չ/ Բ	Ծառայության անվանումը	Տեխնիկական բնութագիր	Միավորի առավելագույն գին ներառյալ ԱԱՀ-ն
I		«Երևանի ՁԷԿ» ՓԲԸ-ի ՀՇԳՑ թիվ 1 Էներգաբլոկի օդորակիչների սպասարկման ծառայություններ	
1	1.Դիագնոստիկա (ընդհանուր թերությունների և անսարքությունների հայտնաբերում)	Օդորակիչի մոդելը՝ KB – AHN276, Ցրտարտադրողականություն - 97 ԿՎտ, Ձերմարտադրողականություն - 149 ԿՎտ, Ձեռուցման եղանակ – Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը - R22, Արտադրող՝ Kiturami Bumyang Air Conditioning Co. LTD, Կորեա	15000
	2.Կոնդենսատորի լվացում		49200
	3.Գոլորշացուցիչի և ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում		65600
	4.Օդամուղի ընդհանուր լվացում		41000
2	1.Դիագնոստիկա (ընդհանուր թերությունների և անսարքությունների հայտնաբերում)	Օդորակիչի մոդելը՝ KB – AHN112, Ցրտարտադրողականություն – 33 ԿՎտ, Ձերմարտադրողականություն – 56 ԿՎտ, Ձեռուցման եղանակ – Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը - R22, Արտադրող՝ Kiturami Bumyang Air Conditioning Co. LTD, Կորեա	15000
	2.Կոնդենսատորի լվացում		24600

	3. Գոլորշացուցիչի և ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում		41000
	4. Օդամուղի ընդհանուր լվացում		41000
3	1. Դիագնոստիկա (ընդհանուր թերությունների և անսարքությունների հայտնաբերում)	Օդորակիչի մոդելը՝ PVU 150J, Ցրտարտադրողականություն – 33,3 ԿՎտ, Ձերմարտադրողականություն – 10ԿՎտ, Ձեռուցման եղանակ – Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը - R407C, Արտադրող՝ Kiturami Bumyang Air Conditioning Co. LTD, Կորեա	15000
	2. Կոնդենսատորի լվացում		24600
	3. Գոլորշացուցիչի և ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում		41000
	4. Լվացվող տիպի ֆիլտրերի ախտահանում:		4100
4	1. Դիագնոստիկա (ընդհանուր թերությունների և անսարքությունների հայտնաբերում)	Օդորակիչի մոդելը՝ PVE 30M, Ցրտարտադրողականություն – 6,4 ԿՎտ, Ձերմարտադրողականություն – 3 ԿՎտ, Ձեռուցման եղանակ – Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը - R407C, Արտադրող՝ Kiturami Bumyang Air Conditioning Co. LTD, Կորեա	15000
	2. Կոնդենսատորի լվացում		12300
	3. Գոլորշացուցիչի և ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում		16400

	4. Լվացվող տիպի ֆիլտրերի ախտահանում:		4100
5	1. Դիագնոստիկա (ընդհանուր թերությունների և անսարքությունների հայտնաբերում)	Օդորակիչի մոդելը՝ PVE 50M, Ցրտարտադրողականություն – 7,344տ, Ձերմարտադրողականություն – 11,544տ, Ձեռոցման եղանակ – Էլեկտրական, Ֆրենի մակնիշը - R407C , Արտադրող՝ Kiturami Bumyang Air Conditioning Co. LTD, Կորեա	4100
	2. Կոնդենսատորի լվացում		16400
	3. Գոլորշացուցիչի և ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում		20500
	4. Լվացվող տիպի ֆիլտրերի ախտահանում:		6560
6	1. Դիագնոստիկա (ընդհանուր թերությունների և անսարքությունների հայտնաբերում)	Օդորակիչի մոդելը՝ PVE 100M, Ցրտարտադրողականություն – 21,344տ, Ֆրենի մակնիշը - R407C, Արտադրող՝ Kiturami Bumyang Air Conditioning Co. LTD, Կորեա	8200
	2. Կոնդենսատորի լվացում		20500
	3. Գոլորշացուցիչի և ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում		28700
	4. Լվացվող տիպի ֆիլտրերի ախտահանում:		12300

7	1. Դիագնոստիկա (ընդհանուր թերությունների և անսարքությունների հայտնաբերում)	Օդորակիչի մոդելը՝ PVE 80M, Ցրտարտադրողականություն – 12.5 ԿՎտ, Ձերմարտադրողականություն – 16.5 ԿՎտ, Ձեռուցման եղանակ – Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը - R407C, Արտադրող՝ Kiturami Bumyang Air Conditioning Co. LTD, Կորեա	15000
	2. Կոնդենսատորի լվացում		20500
	3. Գոլորշացուցիչի և ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում		28700
	4. Լվացվող տիպի ֆիլտրերի ախտահանում:		4100
8	1. Դիագնոստիկա (ընդհանուր թերությունների և անսարքությունների հայտնաբերում)	Օդորակիչի մոդելը՝ PVE 20P, Ցրտարտադրողականություն – 4,2 ԿՎտ, Ձերմարտադրողականություն – 6,4 ԿՎտ, Ձեռուցման եղանակ – Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը - R407C, Արտադրող՝ Kiturami Bumyang Air Conditioning Co. LTD, Կորեա	15000
	2. Կոնդենսատորի լվացում		6970
	3. Գոլորշացուցիչի և ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում		12300
	4. Լվացվող տիպի ֆիլտրերի ախտահանում:		6560
10	1. Դիագնոստիկա (ընդհանուր թերությունների և անսարքությունների հայտնաբերում)	Օդորակիչի մոդելը՝ PAS120L, Ցրտարտադրողականություն – 28,8 ԿՎտ, Ձերմարտադրողականություն – 9,7 ԿՎտ, Ձեռուցման եղանակ – Էլեկտրական,	15000

	2.Կոնդենսատորի լվացում	Ֆրեոնի մակնիշը - R22, Արտադրող` TEMPSTAR ICP, ԱՄՆ	24600
	3.Գոլորշացուցիչի և ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում		41000
	4. Լվացվող տիպի ֆիլտրերի ախտահանում:		8200
11	1.Դիագնոստիկա (ընդհանուր թերությունների և անսարքությունների հայտնաբերում)	Օդորակիչի մոդելը` PAF048L, Ցրտարտադրողականություն – 10,4 ԿՎտ, Ձերմարտադրողականություն – 6,6 ԿՎտ, Ձեռուցման եղանակ – Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը - R22, Արտադրող` TEMPSTAR ICP, ԱՄՆ	15000
	1.Կոնդենսատորի լվացում		18040
	2.Գոլորշացուցիչի և ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում		22140
	4. Լվացվող տիպի ֆիլտրերի ախտահանում:		4100
12	1.Դիագնոստիկա (ընդհանուր թերությունների և անսարքությունների հայտնաբերում)	Օդորակիչի մոդելը` C12L4U, Ցրտարտադրողականություն – 3,52 ԿՎտ, Ձերմարտադրողականություն – 3,87 ԿՎտ, Ձեռուցման եղանակ – Ձերմային պոմպ, Ֆրեոնի մակնիշը - R22, Արտադրող` LG	15000
	2.Կոնդենսատորի լվացում		9840
			12300

	3.Գոլորշացուցիչի և ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում		
	4. Լվացվող տիպի ֆիլտրերի ախտահանում:		4100
13	1.Դիագնոստիկա (ընդհանուր թերութունների և անսարքությունների հայտնաբերում)	Օդորակիչի մոդելը՝ W05LC, Ցրտարտադրողականություն – 1,5 ԿՎտ, Ֆրեոնի մակնիշը – R22, Արտադրող՝ LG	15000
	2.Կոնդենսատորի լվացում		2460
	3.Գոլորշացուցիչի ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում		4100
	4. Լվացվող տիպի ֆիլտրերի ախտահանում:		2460
14	1.Դիագնոստիկա (ընդհանուր թերութունների և անսարքությունների հայտնաբերում)	Օդորակիչի մոդելը՝ S 24A W U 52, Ցրտարտադրողականություն – 7,03 ԿՎտ, Ձերմարտադրողականություն – 8 ԿՎտ, Ձեռռուցման եղանակ – Ձերմային պոմպ, Ֆրեոնի մակնիշը - R-410A, Արտադրող՝ LG	15000
	2.Կոնդենսատորի լվացում		12300
	3.Գոլորշացուցիչի և ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում		20500
	4. Լվացվող տիպի ֆիլտրերի ախտահանում:		4100

15	1. Դիագնոստիկա (ընդհանուր թերությունների և անսարքությունների հայտնաբերում)	Օդորակիչի մոդելը՝ CU-PA12GKD, Ցրտարտադրողականություն – 3,6 ԿՎտ, Ձերմարտադրողականություն – 4 ԿՎտ, Ձեռուցման եղանակ – Ձերմային պոմպ, Ֆրեոնի մակնիշը - R22, Արտադրող՝ PANASONIC	15000
	2. Կոնդենսատորի լվացում		6560
	3. Գոլորշացուցիչի և ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում		10660
	4. Լվացվող տիպի ֆիլտրերի ախտահանում:		2460
16	1. Դիագնոստիկա (ընդհանուր թերությունների և անսարքությունների հայտնաբերում)	Օդորակիչի մոդելը՝ WFA48PF8MC, Ցրտարտադրողականություն – 14,1 ԿՎտ, Ձերմարտադրողականություն – 15,2+3,5 ԿՎտ, Ձեռուցման եղանակ – Ձերմային պոմպ-էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը - R22, Արտադրող՝ White-Wesinghouse	15000
	2. Կոնդենսատորի լվացում		24600
	3. Գոլորշացուցիչի և ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում		28700
	4. Լվացվող տիպի ֆիլտրերի ախտահանում:		4100

17	1. Դիագնոստիկա (ընդհանուր թերությունների և անսարքությունների հայտնաբերում)	Օդորակիչի մոդելը՝ FTHF48/THF48 Ցրտարտադրողականություն – 17 ԿՎտ, Ջերմարտադրողականություն – 18 ԿՎտ, Ջեռուցման եղանակ – Ջերմային պոմպ և էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը - R-410A, Արտադրող՝ FJ THERMA	15000
	2. Կոնդենսատորի լվացում		30000
	3. Գոլորշացուցիչի և ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում		28700
	4. Լվացվող տիպի ֆիլտրերի ախտահանում:		4100
II		«Երյանի ՋԷԿ» ՓԲԸ-ի ՀՇԳՑ թ1 Էներաբլոկի օդորակիչների ընթացիկ նորոգման ծառայություններ	
1	1. Ջերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում	Օդորակիչի մոդելը՝ KB – AHN276, Ցրտարտադրողականություն - 97 ԿՎտ, Ջերմարտադրողականություն - 149 ԿՎտ, Ջեռուցման եղանակ – էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը - R22 (25 կգ), Արտադրող՝ Kiturami Bumyang Air Cor ditioning Co. LTD, Կորեա	1344
	2. Սառնարային ագենտի լիցքավորում ներառյալ գազը՝ 1կգ		12300
	3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում:		20500
	4. Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում		12300
	5. Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:		32800

2	1. Ջերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում	Օդորակիչի մոդելը՝ KB – AHN112, Ցրտարտադրողականություն – 33 ԿՎտ, Ջերմարտադրողականություն – 56 ԿՎտ, Ջեռուցման եղանակ – Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը - R22 (13 կգ), Արտադրող՝ Kiturami Bummyang Air Conditioning Co. LTD, Կորեա	2460
	2. Սառնարային ագենտի լիցքավորում ներառյալ գազը՝ 1 կգ		12300
	3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում:		20500
	4. Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում		1230
	5. Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:		36900
3	1. Ջերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում	Օդորակիչի մոդելը՝ PVE 100M, Ցրտարտադրողականություն – 21,3ԿՎտ, Ֆրեոնի մակնիշը - R407C (10 կգ), Արտադրող՝ Kiturami Bummyang Air Conditioning Co. LTD, Կորեա	2460
	2. Սառնարային ագենտի լիցքավորում ներառյալ գազը՝ 1 կգ		16400
	3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում:		16400
	4. Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում		12300
	5. Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:		24600

4	1. Ջերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում	Օդորակիչի մոդելը՝ PVU 150J, Ցրտարտադրողականություն – 33,3 ԿՎտ, Ջերմարտադրողականություն – 10 ԿՎտ, Ջեռուցման եղանակ – Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը - R407C (8.5 կգ), Արտադրող՝ Kiturami Bumyang Air Conditioning Co. LTD, Կորեա	2460
	2. Սառնարային ագենտի լիցքավորում ներառյալ գազը՝ 1 կգ		16400
	3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում:		16400
	4. Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում		12300
	5. Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:		24600
5	1. Ջերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում	Օդորակիչի մոդելը՝ PVE 30M, Ցրտարտադրողականություն – 4,2 ԿՎտ, Ջերմարտադրողականություն – 6,4 ԿՎտ, Ջեռուցման եղանակ – Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը - R407C (4 կգ), Արտադրող՝ Kiturami Bumyang Air Conditioning Co. LTD, Կորեա	2460
	2. Սառնարային ագենտի լիցքավորում ներառյալ գազը՝ 1 կգ		12300
	3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում:		14760
	4. Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում		12300
	5. Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:		24600

6	1. Ջերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում	Օդորակիչի մոդելը՝ PVE 50M, Ցրտարտադրողականություն – 7,3Կտ, Ջերմարտադրողականություն – 11,5Կտ, Ձեռուցման եղանակ – Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը - R407C (5 կգ), Արտադրող՝ Kiturami Bumyang Air Conditioning Co. LTD, Կորեա	2460
	2. Սառնարային ագենտի լիցքավորում ներառյալ գազը՝ 1 կգ		16400
	3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում:		14760
	4. Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում		8200
	5. Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:		20500
9	1. Ջերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում	Օդորակիչի մոդելը՝ PVE 80M, Ցրտարտադրողականություն – 12 Կտ, Ջերմարտադրողականություն – 12,3 Կտ, Ձեռուցման եղանակ – Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը - R407C (8 կգ), Արտադրող՝ Kiturami Bumyang Air Conditioning Co. LTD, Կորեա	2460
	2. Սառնարային ագենտի լիցքավորում ներառյալ գազը՝ 1 կգ		14760
	3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում:		16400
	4. Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում		8200
	5. Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:		20500
10			2460

	1. Ձերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում	Օդորակիչի մոդելը՝ PVE 20P, Ցրտարտադրողականություն – 4,2 ԿՎտ, Ձերմարտադրողականություն – 6,4 ԿՎտ, Ձեռուցման եղանակ – Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը - R407C (2 կգ), Արտադրող՝ Kiturami Bumyang Air Conditioning Co. LTD, Կորեա	
	2. Սառնարային ագենտի լիցքավորում ներառյալ գազը՝ 1 կգ		14760
	3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում:		12300
	4. Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում		8200
	5. Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:		20500
12	1. Ձերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում	Օդորակիչի մոդելը՝ PAS120L, Ցրտարտադրողականություն – 28,8 ԿՎտ, Ձերմարտադրողականություն – 9,7 ԿՎտ, Ձեռուցման եղանակ – Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը - R22 (7 կգ), Արտադրող՝ TEMPSTAR ICP, ԱՄՆ	2460
	2. Սառնարային ագենտի լիցքավորում ներառյալ գազը՝ 1 կգ		12300
	3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում:		16400
	4. Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում		12300
	5. Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:		20500

13	1. Ջերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում	Օդորակիչի մոդելը՝ PAF048L, Ցրտարտադրողականություն – 10,4 ԿՎտ, Ջերմարտադրողականություն – 6,6 ԿՎտ, Ջեռուցման եղանակ – Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը - R22 (4 կգ), Արտադրող՝ TEMPSTAR ICP, ԱՄՆ	2460
	2. Սառնարային ագենտի լիցքավորում ներառյալ գազը՝ 1 կգ		12300
	3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում:		16400
	4. Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում		12300
	5. Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:		20500
14	1. Ջերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում	Օդորակիչի մոդելը՝ C12L4U, Ցրտարտադրողականություն – 3,52 ԿՎտ, Ջերմարտադրողականություն – 3,87 ԿՎտ, Ջեռուցման եղանակ – Ջերմային պոմպ, Ֆրեոնի մակնիշը - R22 (2կգ), Արտադրող՝ LG	2460
	2. Սառնարային ագենտի լիցքավորում ներառյալ գազը՝ 1 կգ		15000
	3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում:		16400
	4. Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում		12300
	5. Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:		20500

15	1. Ձերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում	Օդորակիչի մոդելը՝ W05LC, Ֆրտարտադրողականություն – 1,5 ԿՎտ, Ֆրեոնի մակնիշը – R22, Արտադրող՝ LG	2460
	2. Սառնարային ագենտի լիցքավորում ներառյալ գազը՝ 1 կգ		12300
	3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում:		16400
	4. Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում		12300
	5. Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:		20500
16	1. Ձերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում	Օդորակիչի մոդելը՝ S 24AW U 52, Ֆրտարտադրողականություն – 7,03 ԿՎտ, Ձերմարտադրողականություն – 8 ԿՎտ, Ձեռուցման եղանակ – Ձերմային պոմպ, Ֆրեոնի մակնիշը - R-410A, Արտադրող՝ LG	2460
	2. Սառնարային ագենտի լիցքավորում ներառյալ գազը՝ 1 կգ		16400
	3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում:		16400
	4. Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում		12300
	5. Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:		20500

17	1. Ձերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում	Օդորակիչի մոդելը՝ CU-PA12GKD, Ցրտարտադրողականություն – 3,6 ԿՎտ, Ձերմարտադրողականություն – 4 ԿՎտ, Ձեռուցման եղանակ – Ձերմային պոմպ, Ֆրեոնի մակնիշը - R-22, Արտադրող՝ PANASONIC	2460
	2. Սառնարային ագենտի լիցքավորում ներառյալ գազը՝ 1 կգ		12300
	3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում:		14760
	4. Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում		2460
	5. Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:		20500
18	1. Ձերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում	Օդորակիչի մոդելը՝ WFA48PF 8MC, Ցրտարտադրողականություն – 14,1 ԿՎտ, Ձերմարտադրողականություն – 15,2-3,5ԿՎտ, Ձեռուցման եղանակ – Ձերմային պոմպ և էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը - R-22 (3 կգ), Արտադրող՝ White-Wesinghouse	2460
	2. Սառնարային ագենտի լիցքավորում ներառյալ գազը՝ 1 կգ		12300
	3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում:		16400
	4. Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում		8200
			20500

	5. Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:		
19	1. Ջերմակարգավորիչ փականի (терморегулирующий вентиль) կարգաբերում	Օդորակիչի մոդելը՝ FTHF48/THF48 Ցրտարտադրողականություն – 17 ԿՎտ, Ջերմարտադրողականություն – 18 ԿՎտ, Ջեռուցման եղանակ – Ջերմային պոմպ և էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը - R-410A (3 կգ), Արտադրող՝ FJ THERMA	2460
	2. Սառնարային ագենտի լիցքավորում ներառյալ գազը՝ 1 կգ		14760
	3. Ֆրեոնի արտահոսքի հայտնաբերում և վերացում:		14760
	4. Սառնարանային կոմպրեսորի յուղի լիցքավորում		6560
	5. Սառնարանային կոմպրեսորի փոխարինում:		16400
20	Կոնդենսատորի հովացուցիչի (вентилятор) փոխարինում (ներառյալ հովացուցիչը)	Օդորակիչի մոդելը՝ KB – AHN276,	8200
21	Կոնդենսատորի հովացուցիչի (вентилятор) շարժիչի փոխարինում (ներառյալ շարժիչը)	Օդորակիչի մոդելը՝ KB – AHN276,	8200
22			20500

	Ավտոմատիկայի պահարանի հովացման համակարգի առանցքային օդափոխիչի փոխարինում (ներառյալ օդափոխիչը)	Օդորակիչի մոդելը՝ KB – AHN112, FAN (Tidar/ մոդել 120×120×38, 220-240V, 50/60Hz 0.14 A)/MPEDANCE PROTECTED	
23	OEM Type Humidifer With controller. OHO45-7 տիպի խոնավացուցիչի փոխարինում նորով	Օդորակիչի մոդելը՝ KB – AHN276, Ցրտարտադրողականություն - 97 ԿՎտ, Ձերմարտադրողականություն - 149 ԿՎտ, Ձեռուցման եղանակ – Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը - R22, Արտադրող՝ Kiturami Bumyang Air Conditioning Co. LTD, Կորեա	20500
24	OEM Type Humidifer With controller. OHO15-7 տիպի խոնավացուցիչի փոխարինում նորով	Օդորակիչի մոդելը՝ KB – AHN276, Ցրտարտադրողականություն - 97 ԿՎտ, Ձերմարտադրողականություն - 149 ԿՎտ, Ձեռուցման եղանակ – Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը - R22, Արտադրող՝ Kiturami Bumyang Air Conditioning Co. LTD, Կորեա	20500
25	OEM Type Humidifer With controller. OHO15-7 տիպի խոնավացուցիչի փոխարինում նորով	Օդորակիչի մոդելը՝ KB – AHN112, Ցրտարտադրողականություն – 33 ԿՎտ, Ձերմարտադրողականություն – 56 ԿՎտ, Ձեռուցման եղանակ – Էլեկտրական, Ֆրեոնի մակնիշը – R22, Արտադրող՝ Kiturami Bumyang Air Conditioning Co. LTD, Կորեա	20500
26	Օդորակիչների ղեկավարման վահանակների առանցքային օդափոխիչի փոխարինում (ներառյալ օդափոխիչը)	Workshop-ի կենտրոնական կառավարման շենքի կենտրոնական և քիմիական արտադրամասի օդորակիչների ղեկավարման վահանակներ KIJRA FAN/ մոդել S4556K, 230 V, 50/60 Hz 16/15W/ KIJRA SEIKI SEISAKUSHO CO.LTD MPEDANCE PROTECTED	24600

		IB6124UF	
III		«Երդանի ՋԷԿ» ՓԲԸ-ի ՀԾԳՑ թ1 Էներաբլոկի օդորակիչների հիմնական նորոգման ծառայություններ	
1	Վիբրամարիչի փոխարինում (вибросаситель) 1'' (ներառյալ վիբրոմարիչը)	Օդորակիչի մոդելը՝ PVE 100M Կոմպրեսորին միացված պղնձյա խողովակի տրամագիծը՝ Ներծծման գիծ- 25,4մմ (1''); Մղման գիծ- 15,9մմ (5/8'')	12300
2	Վիբրամարիչի (вибросаситель) 5/8'' փոխարինում (ներառյալ վիբրոմարիչը)		8200
3	Օ-ձև խամուտ հենարանով 5/8'' փոխարինում (ներառյալ խամուտը)		820
4	Ֆիլտր-չորացուցիչի փոխարինում (ներառյալ ֆիլտր-չորացուցիչը)		12300
5	Ցածր ճնշման մանոմետրի փոխարինում (ներառյալ մանոմետրը)		8200
6	Բարձր ճնշման մանոմետրի փոխարինում (ներառյալ մանոմետրը)		8200
7	Մագնիսական թողարկիչի (CONTACTOR) փոխարինում (ներառյալ թողարկիչը)		12330

8	Էլեկտրական ռելեի փոխարինում (ներառյալ ռելեն)		2460
9	Կոնդենսատորի հովացուցիչի(вентилятор) փոխարինում(ներառյալ հովացուցիչը)		14760
10	Կոնդենսատորի հովացուցիչի(вентилятор) փոխարինում շարժիչով(ներառյալ հովացուցիչը և շարժիչը)		12300
11	Վիբրամարիչի փոխարինում (вибросаситель) 7/8" (ներառյալ վիբրոմարիչը)	Օդորակիչի մոդելը՝ PVU 150J Կոմպրեսորին միացված պղնձյա խողովակի տրամագիծը՝ Ներծծման գիծ- 22,2մմ (7/8"); Մղման գիծ- 15,9մմ (5/8")	8200
12	Վիբրամարիչի (вибросаситель) 5/8" փոխարինում (ներառյալ վիբրոմարիչը)		8200
13	Բաղաձև խողովակի 7/8" փոխարինում (ներառյալ խողովակը)		8200
14	Օ-ձև խամուս հենարանով 5/8" փոխարինում (ներառյալ խամուտը)		820
15	Ֆիլտր-չորացուցիչի փոխարինում (ներառյալ ֆիլտր-չորացուցիչի)		12300

16	Ցածր ճնշման մանոմետրի փոխարինում (ներառյալ մանոմետրը)		8200
17	Բարձր ճնշման մանոմետրի փոխարինում (ներառյալ մանոմետրը)		8200
18	Մագնիսական թողարկիչի (CONTACTOR) փոխարինում (ներառյալ թողարկիչը)		16400
19	Էլեկտրական ռելեի փոխարինում (ներառյալ ռելեն)		4100
20	Կոնդենսատորի հովացուցիչի(вентилятор) փոխարինում(ներառյալ հովացուցիչը)		12300
21	Կոնդենսատորի հովացուցիչի(вентилятор)շարժիչի փոխարինում (ներառյալ շարժիչը)		16400
22	Վիբրամարիչի փոխարինում (вибросаситель) 7/8" (ներառյալ վիբրոմարիչը)	Օդորակիչի մոդելը՝ PVE 80M Կոմպրեսորին միացված պղնձյա խողովակի տրամագիծը՝ Ներծման գիծ- 22,2մմ (7/8"); Մղման գիծ- 15,9մմ (5/8")	8200
23	Վիբրամարիչի (вибросаситель) 5/8" փոխարինում (ներառյալ վիբրոմարիչը)		8200

24	Օ-ձև խամուտ հենարանով 5/8" փոխարինում (ներառյալ խամուտը)	8200
25	Ֆիլտր-չորացուցիչի փոխարինում (ներառյալ ֆիլտր-չորացուցիչը)	8200
26	Ցածր ճնշման մանոմետրի փոխարինում (ներառյալ մանոմետրը)	8200
27	Բարձր ճնշման մանոմետրի փոխարինում (ներառյալ մանոմետրը)	8200
28	Մագնիսական թողարկիչի (CONTACTOR) փոխարինում (ներառյալ թողարկիչը)	16400
29	Էլեկտրական ռելեի փոխարինում (ներառյալ ռելեն)	4100
30	Կոնդենսատորի հովացուցիչի(вентилятор) փոխարինում(ներառյալ հովացուցիչը)	12300
31	Կոնդենսատորի հովացուցիչի(вентилятор)շարժ իչի փոխարինում (ներառյալ շարժիչը)	9840

32	Ցածր ճնշման մանոմետրի փոխարինում (ներառյալ մանոմետրը)	Օդորակիչի մոդելը՝ PVE 50M Կոմպրեսորին միացված պղնձյա խողովակի տրամագիծը՝ Ներծծման գիծ- 19,1մմ (3/4"); Մղման գիծ- 12,7մմ (1/2")	8200
33	Բարձր ճնշման մանոմետրի փոխարինում (ներառյալ մանոմետրը)		8200
34	Ֆիլտր-չորացուցիչի փոխարինում (ներառյալ ֆիլտր-չորացուցիչը)		8200
35	Մագնիսական թողարկիչի (CONTACTOR) փոխարինում (ներառյալ թողարկիչը)		16400
36	Կոնդենսատորի հովացուցիչի(вентилятор) փոխարինում(ներառյալ հովացուցիչը)		12300
37	Կոնդենսատորի հովացուցիչի(вентилятор)շարժիչի փոխարինում (ներառյալ շարժիչը)		9840
IV		«Երթանի Ձերմաելկտրակենտրոն» ՓԲԸ-ի վարչական շենքի 3 հարկից շինությունների օդորակիչների ընթացիկ սպասարկման 3 նորոգման ծառայությունների	
1	Օդորակիչի տեղադրում	Օդորակիչ 9000 BTU Օդորակիչ 12000 BTU Օդորակիչ 24000 BTU	28700
2	Օդորակիչի ապամոտաժում		16400

3	Ավտոաշտարակ (автомобиль)	1 ժամը	8200
4	Դիագնոստիկա (ընդհանուր թերությունների և անսարքությունների հայտնաբերում)	Օդորակիչ 9000 BTU Ֆրեոնի մակնիշը՝ R22/R410A	6560
5	Կոնդեսատորի լվացում (դրսի բլոկ)		16400
6	Պրոֆիլակտիկա (ներքին բլոկի մաքրում փոշուց, ախտահանում և լվացում, ֆիլտրերի մաքրում մանրէազերծող նյութի կիրառմամբ)		12300
7	Սառնարանային ագենտի լիցքավորում ներառյալ գազը՝ 1կգ		12300
8	Արտահոսքի վերացում		12300
9	Ռելեի փոխարինում		4100
10	Կառավարման պլատայի փոխարինում		16400
11	Խցանման վերացում		4100
12	Կոմպրեսորի փոխարինում 9000 BTU կամ համարժեք (ներառյալ կոմպրեսորը)		45100
13	Ռևերսի կլապանի փոխարինում(ներառյալ ռևերսի կլապանը)		8200

14	Փականների փոխարինում		4920
15	Ֆեն շարժիչի նորոգում		10660
16	Ֆեն շարժիչի փոխարինում(ներառյալ ֆեն շարժիչը)		14760
17	Դրսի բլոկի հովացուցիչի փոխարինում(ներառյալ հովացուցիչը)		14760
18	Դրսի բլոկի հովացուցիչի շարժիչի փոխարինում (ներառյալ շարժիչը)		14760
19	Ձերմամեկուսիչների փոխարինում		3280
20	Կոնդենսատորի փոխարինում 25 mf կամ համարժեք		820
21	Կոնդենսատորի փոխարինում 35 mf կամ համարժեք		11480
22	Կոնդենսատորի փոխարինում 45 mf կամ համարժեք		820
23	Կոնդենսատորի փոխարինում 50 mf կամ համարժեք		820

24	Դիագնոստիկա (ընդհանուր թերությունների և անսարքությունների հայտնաբերում)	Օդորակիչ 12000 BTU Ֆրեոնի մակնիշը՝ R22/R410A	4100
25	Կոնդեսատորի լվացում (դրսի բլոկ)		6560
26	Պրոֆիլակտիկա (ներքին բլոկի մաքրում փոշուց, ախտահանում և լվացում, ֆիլտրերի մաքրում մանրէազերծող նյութի կիրառմամբ)		4920
27	Սառնարանային ագենտի լիցքավորում ներառյալ գազը՝ 1կգ		12300
28	Արտահոսքի վերացում		14760
29	Ռելեի փոխարինում		4100
30	Կառավարման պլատայի փոխարինում		12300
31	Խցանման վերացում		4100
32	Կոմպրեսորի փոխարինում 12000 BTU կամ համարժեք (ներառյալ կոմպրեսորը)		53300

33	Ռւերսի կլապանի փոխարինում(ներառյալ ռւերսի կլապանը)		8200
34	Փականների փոխարինում		6560
35	Ֆեն շարժիչի նորոգում		4920
36	Ֆեն շարժիչի փոխարինում(ներառյալ ֆեն շարժիչը)		10660
37	Դրսի բլոկի հովացուցիչի փոխարինում(ներառյալ հովացուցիչը)		14760
38	Դրսի բլոկի հովացուցիչի շարժիչի փոխարինում (ներառյալ շարժիչը)		12300
39	Ձերմամեկուսիչների փոխարինում		1230
40	Կոնդենսատորի փոխարինում 35 mf կամ համարժեք		12300
41	Կոնդենսատորի փոխարինում 45 mf կամ համարժեք		820
42	Կոնդենսատորի փոխարինում 50 mf կամ համարժեք		820
43	Դիագնոստիկա (ընդհանուր թերությունների և անսարքությունների հայտնաբերում)	Օդորակիչ 24000 BTU Ֆրեոնի մակնիշը՝ R22/R410A	4100

44	Կոնդեսատորի լվացում (դրսի բլոկ)	6560
45	Պրոֆիլակտիկա (ներքին բլոկի մաքրում փոշուց, ախտահանում և լվացում, ֆիլտրերի մաքրում մանրէազերծող նյութի կիրառմամբ)	7380
46	Սառնարանային ագենտի լիցքավորում ներառյալ գազը`1կգ	12300
47	Արտահոսքի վերացում	14760
48	Ռելեի փոխարինում	8200
49	Կառավարման պլատայի փոխարինում	12300
50	Խցանման վերացում	4920
51	Կոմպրեսորի փոխարինում 24000 BTU կամ համարժեք(ներառյալ կոմպրեսորը)	98400
52	Ռևերսի կլապանի փոխարինում(ներառյալ ռևերսի կլապանը)	9840
53	Փականների փոխարինում	4920
54	Ֆեն շարժիչի նորոգում	1640
55		10660

	Ֆեն շարժիչի փոխարինում(ներառյալ ֆեն շարժիչը)		
56	Դրսի բլոկի հովացուցիչի փոխարինում(ներառյալ հովացուցիչը)		12300
57	Դրսի բլոկի հովացուցիչի շարժիչի փոխարինում (ներառյալ շարժիչը)		13120
58	Ձերմամեկուսիչների փոխարինում		1640
59	Կոնդենսատորի փոխարինում 45 mf կամ համարժեք		820
60	Կոնդենսատորի փոխարինում 50 mf կամ համարժեք		12300
61	Դիագնոստիկա (ընդհանուր թերությունների և անսարքությունների հայտնաբերում)	Օդորակիչ 60000 BTU Ֆրեոնի մակնիշը՝ R22	6700
62	Կոնդենսատորի լվացում (դրսի բլոկ)		14760
63	Գոլորշացուցիչի և ներքին բլոկի խոնավ մակերևույթների ախտահանում և լվացում, ֆիլտրերի մաքրում մանրէազերծող նյութի կիրառմամբ		16400
64			246000

	Կոմպրեսորի փոխարինում (ներառյալ կոմպրեսորը)		
65	Արտահոսքի վերացում		16400
66	Խլադոգեների լիցքավորում ներառյալ գազը՝ 1 կգ (\$րեոն)		12300
67	Դրսի բլոկի հովացուցիչի փոխարինում(ներառյալ հովացուցիչը)		14760
68	Դրսի բլոկի հովացուցիչի շարժիչի փոխարինում (ներառյալ շարժիչը)		16400
Առավելագույն միավոր գների հանրագումար			3651724
*Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ ծառայությունների համար առաջարկվող ընդհանուր գումարով:			
Տեխնիկական պահանջներ			
1	<<TEMPSTAR ICP>> արտադրող ընկերության կոնդիցիոներների տեխնիկական սպասարկումը պետք է կատարվի միայն Էներգաբլոկի կանգառի ժամանակ:		
2	Միևնույն սրահում գտնվող օդի կոնդիցիոներների տեխնիկական սպասարկումը հնարավոր չէ կատարել միաժամանակ՝ արտադրական անհրաժեշտությունից ելնելով:		
3			

	<p><<Երևանի ՁԷԿ>> ՓԲԸ-ի ՅՇԳՑ թ1 Էներգաբլոկի ներքոնշված օդորակիչների թերությունների և անսարքությունների դեպքում նորոգումները պետք է կատարվեն առավելագույնը 24 ժամվա ընթացքում, իսկ նախնական դիագնոստիկան և թերությունների հայտնաբերումը՝ հրատապ 4 ժամվա ընթացքում. մոդել KB-AHN276, KB – AHN112, PVE 100M, PVU 150J, PVE 30M, PVE 50M, PVE 80M, PVE 20P արտադրող-Kiturami Bumyang Air Conditioning Co.LTD Կորեա/մոդել PAS120L, PAF048L արտադրող-TEMSTAR ICP, ԱՄՆ/մոդել C12L4U, W05LC արտադրող-LG:</p>	

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Երևանի Զերմալէկտրակենտրոն ՓԲԸ
ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3
Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 2473600002170010
ՀՎՀՀ 02205028

գլխավոր տնօրեն _____ Ա. Գրիգորյան
/ստորագրություն/



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

ԱՁ Վահե Խաչատրյան Հայկի
Ք. Երևան, Նոր Նորք Նանսեն 18/1 ք9
Բանկ «Ինտերբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050832124101001
ՀՎՀՀ 80588284

տնօրեն _____ Լ. Խաչատրյան
(ստորագրություն)



Պայմանագրի կողմ

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴԻԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանում	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____ ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____ ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն